«Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ
0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ,
Հեռ. 24 50 99; ֆաքս՝ 24 51 99

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՑ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է "ՄԷԿ" ՓԲԸ ԿԳՄ 2015 թվականի հունիսի 2-ի նիստի
որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն
Բաց ընթացակարգի ծածկագիրը՝ «9-*Նորոգում-2015-ՄԷԿ*»

Պատվիրատուն՝ «Միջազգային Էներգետիկ Կորպորացիա» ՓԲԸ, որի հասցեն է ք. 0021 Հայաստան, Երևան, Ադոնցի 10Բ, հայտարարում է բաց ընթացակարգով գնում: Բաց ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել պայմանագիր՝ «ՄԷԿ» ՓԲԸ Արգել ՀԷԿ-ի ճնշման խողովակաշարի 6-ից մինչև 7 անկերային հենարանների հատվածում՝ 4 գծերի ներկման, խողովակաշարի տաշտակի մաքրման, նորոգման կատարման՝ Պայմանագիր կնքելու իրավունքով:
Աշխատանքների սկիզբը համարվում է Կապալի պայմանագրի կնքման ամսաթիվը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պայմանների համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Գնման ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված անձինք:

Մասնակիցները պետք է բավարարեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով սահմանված որակավորման չափանիշների պահանջները: Ընտրված մասնակցին որոշելու համար կկիրառվի հայտերի բացման և գնահատման մասին «Գնումների մասին» ՀՀ օրենքով և "ՄԷԿ" ՓԲԸ կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների կանոնակարգված գնումներ անցկացնելու կարգի մասին Կանոնադրությունով սահմանված կարգը:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն հրավերը (մրցութային փաստաթղթերը) թղթային տեսքով ստանալու համար, անհրաժեշտ է գրավոր դիմել պատվիրատուին վերջինիս հասցեով՝ մինչև 2015 թվականի հուլիսի 13-ին, ժամը 16:00; վճարելով 35 000 ՀՀ դրամ գումար՝ "Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ դրամարկղ կամ հաշվեհամարին ՀՎՀՀ-00078569; "Ամերիաբանկ" ՓԲԸ Հ/Հ - 1570012654440100: "Արդշինբանկ" ՓԲԸ Հ/Հ - 2470100916650000:

Բաց ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել *"Միջազգային Էներգետիկ Կորպորացիա" ՓԲԸ / Հայաստանի Հանրապետություն, 0021, ք.Երևան, փող. Ադոնցի 10 Բ, հեռախոս՝ 24 50 99, ֆաքս՝ 24 51 99, e-mail՝* office@mek.am;

Հայտերը բացվում են հայտերի Ընկերության ԿԳՄ նիստում՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետին հաջորդող օրը՝ *2015 թվականի հուլիսի 14-ին, ժամը 10:00-ին:*

Մասնակիցների որակավորման տվյալների՝ բաց ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին՝ համապատասխանությունը գնահատելու համար Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն բաց ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա.Բարսեղյանին, 010 24 50 99 հեռախոսահամարով:

Գլխավոր տնօրեն Ա.Գրիգորյան